ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>
ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների մոտ բանավոր խոսքի հաղորդակցման ուսուցման մեթոդիկան

Անցկացման վայր՝ Վարդենիս

Աշխատանքի ղեկավար՝ Բեյբության Հասմիկ

Ուսուցիչ՝ Վարդանյան Տաթևիկ

Դպրոց՝ Վարդենիսի ավագ դպրոց

2022թ

ՎԱՐԴԵՆԻՍ

Բովանդակություն

Ներածություն3

Գրական ակնարկ5

Բանվոր հաղորդակցման տեսակները՝ մենախոսություն, երկխոսություն:10

Փորձարարական հետազոտություն12
Խմբի նկարագիր12
Փորձարարական դաս-112
Փորձարարական դաս-214
Վերլուծություն15
Գրականության ցանկ 17
Հավելում 18

Ներածություն

Բանավոր հաղորդակցման ուսուցումը կարելի է բաժանել երկու բաղադրիչների՝ ունկնդրել և խոսել: Դասի վերջնական նպատակը պետք է լինի աշակերտների ազատ հաղորդակցման հմտությունների ձևավորումը: Ընդ որում, խոսելը նույնպես, իր հերթին, բաժանվում է երկու բաղկացուցիչների՝ **մենախոսություն** (որի ժամանակ աշակերտը ձևակերպում և արտահայտում է սեփական մտքերը միայնակ, ինքնուրույն ձևավորելով խոսքի ընթացքը) և **երկխոսություն** (որի ժամանակ խոսքը ձևավորվում է երկու կամ ավելի մասնակիցների զրույցի ընթացքում և, հետևաբար, աշակերտը անընդհատ պետք է ոչ միայն ձևակերպի և շարադրի իր մտքերը, այլև կարողանա ընկալել զրուցակցի խոսքը, լսել նրան և համապատասխան խոսքային արձագանք տալ):

Բանավոր հաղորդակցման առաջին բաղադրիչը **ունկնդրելն է,** որը դպրոցականների համար տեղեկատվության յուրացման կարևորագույն ուղիներից

է: Շրջապատող աշխարհի վերաբերյալ տեղեկատվության մոտ 25%մարդը ստանում է ունկնդրելու միջոցով: Դպրոցում ունկնդրումը զբաղեցնում է ուսումնական գործընթացի մոտ 40%:[1]Ինչպես հայտնի է, ունկնդրումը կարող է լինել՝ **գլոբալ** (տեղեկատվության յուրացումը ընդհանուր առմամբ, ամբողջովին), **մանրակրկիտ**(տեղեկատվության ավելի մանրամասնված, մանրակրկիտ յուրացումը), **քննադատական** (տեղեկատվության յուրացումը միաժամանակյա գնահատումով), **ոչ քննադատական** (տեղեկատվության յուրացումը առանց որևէ գնահատականի), **ռեֆլեքսիվ** (ունկնդրումը և համապատասխան արձագանքումը, երբ ունկնդրողը միաժամանակ միջամտում է զրուցակցի խոսքին), **ոչ ռեֆլեքսիվ** (պասսիվ ունկնդրում առանց միջամտության):

Հետևաբար, դասը վարելիս, ուսուցիչը պետք է նախապես ինքն իր համար հստակեցնի, թե դասի տվյալ թեմայի համար ունկնդրման հատկապես որ տարբերակն է նախընտրելի (գլոբա՞լ, թե՞ մանրակրկիտ, քննադատակա՞ն, թե՞ ոչ քննադատական և այլն): Եվ եթե ունկնդրումը աշակերտների կողմից չի համապատասխանում իր նախանշած տիպին, նա պետք է կարողանա բացահայտել պատճառները և աշխատի հասնել նախապես որոշված տարբերակին:

Գրականության մեջ և պրակտիկայում հանդիպում են ունկնդրման արդյունավետությանը խոչընդոտող բազմաթիվ գործոններ (անհետաքրքրություն, կողմնակի շեղող գործոններ, խոսողի միապաղաղ կամ վատ արտասանությունը և այլն), ինչի արդյունքում աշակերտները «լսում են, բայց իրականում չեն լսում», «լսում են, բայց չեն ընկալում», «ընկալում են, բայց սխալ են հասկանում»:

Սքրիվենները ասում է, որ grammar-ի և lexis-ի թեկուզ գերազանց իմացությունը բոլորովին չի նշանակում, թե տվյալ աշակերտը զրույցի ժամանակ գոնե մի բառ կհասկանա զրուցակցի ասածից: Առավել հանդիպող պատճառներն են.

- մարդիկ չափազանց արագ են խոսում,

- ունկնդրողը չի հասցնում հասկանալ որտեղ սկսվեց բառը, որտեղ այն ավարտվեց և սկսվեց հաջորդ բառը;

1

- ունկնդրողին անծանոթ է տվյալ բառի արտասանությունը (իրեն ծանոթ բառը նա տվյալ ինտոնացիայով չի հասկանում);

- ունկնդրողը չի հասկանում զրուցակցի արտահայտած մտքի հուզական ասպեկտը (վա՞խ, ուրախությու՞ն, բարկությու՞ն, թե՞ այլ);

- չի կարողանում խոսքի միջից վերցնել այն կարևոր բառերը, որոնք արտահայտում են ասվածի բուն իմաստը:

Գրական ակնարկ

Օտար լեզվով բանավոր խոսքի ընկալումը լեզվի իմացության հիմնարար բաղադրիչներից է և դրա ուսուցումը իրավամբ կազմում է օտար լեզվի դասավանդման հենասյուներից մեկը: Հենց բանավոր խոսքի միջոցով են պարզ դառնում սովորողի ձեռք բերած հետևյալ կարողությունները՝

- բանավոր խոսք
- վերարտադրություն
- հաղորդակցություն
- Համագործակցություն
- Լեզվամտածողություն
- գիտելիքի յուրացում
- ստեղծագործական մտածողություն

Հաղթահարման տեսանկյունից դիտարկելիս, խոսքի ընկալումը, լինելով որոշիչ գործոն հաղորդակցության գործընթացում, միաժամանակ լեզվական չորս հմտություններից (խոսել, լսել, գրել, կարդալ) **ամենադժվարն է***:*

Լեզվի ուսուցման գործընթացում կարևորագույն և առաջնային **նպատակներից** մեկը հենց բանավոր հացորդակցման հմտությունների զարգացումն է,ինչպես նաև սովորողների ստեղծագործական մտքի և ինքնուրույն մտածողության կարողությունների ձևավորումը: **Ինքնուրույն** ասելով պետք է հասկանալ սովորողի՝ ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացին:

Բանավոր հաղորդակցումը հիմնականում սոցիալական գործընթաց է, որի ընթացքում տեղի է ունենում փորձի, մեթոդների ու հմտությունների փոխանակում:

Ինչպես նշել է ռուս լեզվաբան **Պասովը** , հաղորդակցությունը միշտ ռացիոնալ և զգացմունքային է, որի ընթացքում բացահայտվում են մտքեր, ձևավորվում է կյանքի նոր ձև, որն էլ բանավոր հաղորդակցության

առավելություններից մեկն է: Սա մարդու գիտակցության և ինքնագիտակցության կարևոր պայմանն է: Բանավոր հաղորդակցությունը գործունեության անկախ տեսակ է և չի կարող սահմանափակվել որոշակի հասկացություններով: Միշտ պետք է հաշվի առնել հաղորդակցության նպատակը,արդյունքը, մեթոդները և միավորները, որոնք էլ բանավոր հաղորդակցության մեջ **դժվարություններ** են առաջացնում:

Հաղորդակցությունն ունի իր առարկան,այսինքն թե ինչին է այն ուղղված: Ակնհայտ է, որ այն ուղղված է սովորողների փոխհարաբերություններին:

Բանավոր խոսքի ուսուցումը **բազմակողմանի և բարդ գործընթաց** է, քանի որ խոսելը հիմնված է բառապաշարի, քերականական հմտությունների, արտասանության վրա:

Պետք է նաև հաշվի առնել խոսքի արտաքին կառուցվածքը: Այն բաղկացած է հետևյալ մասերից՝

- **Մոտիվացիոն և խթնաող՝** այսինքն մշակել հետևյալ պլանը՝ Ինչ, ինչու և ինչ խոսել:
- **Վերլուծական փուլ:** Այս փուլը նպատակի իրականացման նախապատրաստական փուլն է: Օտար լեզվով խոսելու համար սովորողները պետք է ունենան բառապաշար, դրանք կիրառեն խոսքում:
- **Խոսքի վերահսկման փուլ:** Այս փուլը խոսքի վերահսկման փուլն է , որի նպատակն է հնարավորինս ուղղել սխալները:[2]

Ինչպես նշել է բրիտանացի լեզվաբան **Ռեբեկա Հյուզը** իր “Teaching and Researching” գրքում, «հաղորդակցումը առանձին,անջատ հմտություն չէ»: Այն առանձին գործել չի կարող,քանի որ որոշ բարդ գործողություններ ու ենթահմտություններ են պահանջվում, ինչպես օրինակ ՝ հարուստ բառապաշար, քերականության իմացություն, լեզվի ըմբռնում, ինչպես նաև հչյունաբանության և արտասանության իմացություն: Հաղորդակցվելիս մարդիկ օգտագործում են բազմիմաստ բառեր, և հաճախ անհրաժեշտություն է առաջանում ընտրել համապատասխան իմաստը և այն ճշգրիտ կիրառել խոսքում:

Բառակազմությունից բացի, խիստ կարևոր է ունենալ բառի արտասանական գիտելիքներ ևս, քանի որ օտար լեզվում բառերի գրությունն ու արտասանությունը բավական տարբեր են: Ըստ Հյուզի այս հմտությունները հաջող հաղորդակցման համար շատ էական են:

---

[2] Рогова Верещагина,” МЕТОДИКА ОБУЧЕНИЯ ИНОСТРАННЫМ ЯЗЫКАМ” с 132

Հաղորդակցումն ըստ բրիտանացի լեզվաբան **Մարտին Բիգեյթի** սովորաբար երկկողմանի է: Զրուցակիցները միաժամանակ են նպաստում դիսկուրսին և դրան անմիջապես արձագանքում : Հաղորդակցվելիս մարդիկ լեզուն օգտագործում են իրենց մտքերն ու գաղափարները արտահայտելու համար: Այլ կերպ ասած մարդիկ հաղորդակցվում են, որպեսզի իրենց զրուցակցին ինֆորմացիա հաղորդեն: Այսինքն խոսողին լսող է պետք հաղորդակցումը շարունակելու համար: Լսելն ու խոսելը փոխկապակցված են, քանի որ լսողը ունկնդրում է խոսողին ու արձագանքում խոսքին: Ըստ **Բիգեյթի** օտար լեզվի դասավանդման հիմնական խնդիրներից մեկն է սովորողներին տվյալ լեզուն կիրառել սովորեցնելը: Եվ թե դա որքանով կհաջողվի մեծապես կախված է նրանից, թե ուսուցիչն որքանով է հասկանում իր առջև դրված նպատակները: Օրինակ, ակնհայտ է, որ օտար լեզվով խոսել կարողանալու համար անհրաժեշտ է իմանալ քերականական կանոններ և ունենալ բառապաշար: Լեզվի ուսուցման մի մասը այնուամենայնիվ ուղղված է այս նպատակին: Բայց բանավոր հաղորդակցման ուսուցման գործընթացում ընդրգրկված են այլ բաներ ևս, և կարևոր է իմանալ՝ որոնք են դրանք, որպեսզի դրանք ևս ներգրավվեն ուսուցման գործընթացում: Օրինակ, ստուգելու համար արդյոք սովորողները կարողանում են հաղորդակցվել տվյալ օտար լեզվով, թե ոչ, անհրաժեշտ է նրանց հնարավորություն տալ խոսել որևէ թեմայով: Այդ կերպ է միան հնարավոր լինում հասկանալ, որ կա մեծ տարբերություն լեզվի մասին ունեցած գիտելիքի և այն կիրառելու հմտության մեջ:[3]

Ինչպես նշել են Էսեքսի համալսարանի լեզվաբանության ամբիոնի դասախոսներ **Ջոու ՄաքԴաունը և Քրիստոֆեր Շոուն իրենց** ***"Materials and Methods in ELT"*** գրքում, շատ համատեքստերում հաղորդակցությունը հմտություն է, որի հիման վրա հնարավոր է լինում մարդուն դատել: Այլ կերպ ասած մարդիկ շատ հաճախ կարող են դատողություններ անել լեզվական ունակությունների մասին, քան թե այլ: Նրանք նշել են, որ բանավոր հաղորդակցման դասավանդման ընթացքում պետք է հաշվի առնել սովորողի՝

1. **Տարիքը:** Սա հատկապես կարևոր է հաշվի առնել թեմայի և դասավանդման մեթոդների ընտրության ժամանակ:
2. **Հետաքրքրությունները:** Օգնում է հեշտ կողմնորոշվել թեմաների դասկարգման պարագայում:
3. **Մայրենի լեզուն**: Սա կարող է ազդել քերականության, բառապաշարի կամ արտասանության վրա:

[3]Martin Bygate, "Speaking", Cambridge University Press, 2006, p. 9-10, 76.

4. **Վերաբերմունքը** ուսուցչի և լեզվի նկատմամբ:
5. **Մոտիվացիան:**
6. **Նախընտրած մեթոդները:**[4]

Բրիտանացի լեզվաբաններ**Բրաունի և Յուլեի** նկարագրմամբ, հաղորդակցությունն այն հմտությունն է, որի հիման վրա կարելի է գնահատել սովորողին: Այն ամենօրյա փոխազդեցության կարևոր մասն է, և հաճախ մարդու մասին ձևավորվող առաջին տպավորությունը հիմնված է նրա սահուն և համապարփակ խոսելու կարողության վրա: Ինչպես նկարագրում են նրանք գրավոր և բանավոր լեզվի մեջ կա հսկայական տարբերություն: Բանավոր խոսքի ժամանակ խոսողը խոսելուն զուգահեռ պետք է վերահսկի իր խոսքը, վերլուծի թե հենց նոր ինչ ասաց և միաժամանակ պետք է ձևակերպի իր հաջորդ ասելիքը, ընտրի ճիշտ ինտոնացիա: Իսկ գրավոր խոսքի ժամանակ ճիշտ հակակռակն է: Գրողը հնարավորություն ունի առանց շտապելու աչքի անցկացնել իր գրածը, կանգ առնել յուրաքանչյուր բառի մոտ, անհրաժեշտության դեպքում օգտվել բառարանից: Չնայած դժվարություններին, բանավոր հաղորդակցումը ունի իր առավելությունները: Խոսելու ժամանակ դու հնարավորություն ունես անմիջական շփման մեջ լինելու քեզ լսողների հետ, տեսնելու նրանց, ձևափոխելու խոսքդ: Մինչդեռ գրողը չունի անմիջական արձագանքի հնարավորություն և ստիպված է ենթադրել ընթերցողի արձագանքը: Նրանք նաև նշում են, որ չկա որևէ փորձված մեթոդ, որի վրա կարելի է հենվել բանավոր խոսք ուսուցանելիս: Փաստն այն է, որ ուսուցիչը պետք է ապահովի դասարանը ուսումնական համապատասխան նյութերով, ստեղծի հաղորդակցական միջավայր, որպեսզի բարձրացնի սովորողների խոսքային հմտությունը: Համաձայն Բրաունի ուսուցումն ուղղորդում և հեշտացնում է սովորելը: Բրաունը և Յուլենը բացատրում են, որ բանավոր խոսքի դասավանդման ժամանակ ուսուցիչը օգնում է սովորողներին զարգացնել իրական կյանքում հանդիպող հաղորդակցման իրավիճակներ:

Համաձայն Բրաունի բանավոր հաղորդակցումը ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք հաղորդակցման ընթացքը կարող են հեշտացնել կամ բարդացնել:

1. Խմբվելը , երբ սահուն խոսքը դարձվածային է:
2. Բառերի արտասանությունը. խոսողը հնարավորություն ունի պարզեցնել իր խոսքը բառերի բազմազանության շնորհիվ:

[4]JO McDonough, Christopher Shaw, “Materials and Methods”, Blackwell Publishing 2003. P. 6-7, 87.

3. Խոսակցական լեզուն: Պետք է վստահ լինել,որ սովորողները լավ ծանոթ են բառերին, իդիոմատիկ արտահայտություններին և կարող են դրանք կիրառել խոսքում:
4. Շեշտը, ռիթմը և ինտոնացիան: սրանք անգլերեն լեզվի կարևոր առանձնահատկություններից են:

Բանավոր խոսք ուսուցանելիս շատ կարևոր է հստակեցնել դրա նպատակները: Եթե նպատակը հաղորդակցվելն է,սահունությունն ու ճշգրտությունն ամենակրևոր առանձնահատկություններն են:[5]

Բանավոր հաղորդակցման ուսուցումը կարելի է բաժանել երկու բաղադրիչների՝ ունկնդրել և խոսել: Դասի վերջնական նպատակը պետք է լինի աշակերտների ազատ հաղորդակցման հմտությունների ձևավորումը: Ընդ որում, խոսելը նույնպես, իր հերթին, բաժանվում է երկու բաղկացուցիչների՝ մենախոսություն (որի ժամանակ աշակերտը ձևակերպում և արտահայտում է սեփական մտքերը միայնակ, ինքնուրույն ձևավորելով պշխոսքի ընթացքը) և երկխոսություն (որի ժամանակ խոսքը ձևավորվում է երկու կամ ավելի մասնակիցների զրույցի ընթացքում և, հետևաբար, աշակերտը անընդհատ պետք է ոչ միայն ձևակերպի և շարադրի իր մտքերը, այլև կարողանա ընկալել զրուցակցի խոսքը, լսել նրան և համապատասխան խոսքային արձագանք տալ):

Բանավոր խոսքը (մենախոսություն, երկխոսություն) ըստ արտահայտվողի մտքի ձևավորման ինքնուրույնության աստիճանի կարելի բաժանել հետևյալ խմբերի.

- նախաձեռնողական (ակտիվ) խոսք, որը ենթադրում է խոսքի ստեղծագործական, ինքնուրույն, ակտիվ ձևավորում (հիմնականում օգտագործվում է մենախոսությունների ժամանակ)

- ռեակտիվ խոսք, որը ենթադրում է պատասխան, արձագանք ինչ-որ մեկի կողմից ասված խոսքին (հիմնականում օգտագործվում է երկխոսությունների ժամանակ);

- վերարտադրողական խոսք, որը ենթադրում է արդեն արտահայտված մտքի, խոսքի, առաջարկված թեմայի վերարտադրություն:

1.1Բանվոր հաղորդակցման տեսակները՝ մենախոսություն, երկխոսություն:

Մենախոսություն

[5]Brown and Yule, “Discourse Analysis”, Cambridge University Press, 2010, p. 3-6

Մենախոսությունը մեկ անձի խոսքն է, որի ժամանակ քիչ թե շատ արտահայտում է իր մտքերն ու մտադրությունները, գնահատում է որոշակի իրադարձություններ:

Մենախոսությունը ենթադրում է առնվազն հետևյալ կարողությունները՝

1. Նկարագրել անձերին,որևէ իրադարձություններ,իրեր, երևույթներ:
2. Պատմել դեպքերի և իրադարձությունների զարգացման մասին:
3. Տեղեկացնել, նորություններ հաղորդել:
4. Տեղեկացնել և կարծիք հայտնել ցանկացած թեմայի վերաբերյալ:

Ինչպես նաև մենխոսության ցանկացած տեսակի համար (նկարագրություն,դատողություն,փաստարկում) ընտրել համապատասխան ինտոնացիա, հնչերանգային պատկեր:

Մենխոսությանը բնորոշ են **ամբողջականությունն ու տեղեկատվականությունը:**

Երկխոսություն

Երկխոսությունը խոսքի այն ձևն է,որտեղ երկու անձանց միջև տեղի է ունենում խոսքի փոխանակում : Շատ գիտնականներ կարծում են, որ երկխոսությունն ամենից շատը բանավոր խոսքի բնական ձև է:

Այն կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից,տալ դրան լեզվաբանական,հոգեբանական և արտալեզվաբանական բնութագրում:

Երկխոսությանը բնորոշ **է խոսակցական կլիշեների**՝վերարտադրողական տարրերի օգտագործումը:

Երկխոսությունը ենթադրում է հետևյալ հիմնական կարողությունները՝ շփման, հաղորդակցման կանոնների պահպանում՝ ըստ երկխոսության կոնկրետ տեսակի.[6]

Աշակերտը դպրոցական ծրագրի շրջանակներում մենախոսությունների և երկխոսությունների ձևով պետք է կարողանա խոսակցին հաղորդել և նրանից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ:

[6] Рогова Верещагина," МЕТОДИКА ОБУЧЕНИЯ ИНОСТРАННЫМ ЯЗЫКАМ", ср 135-140

3.Փորձարարական հետազոտություն

3.1.Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի ավագ դպրոցի 11 -րդ դասարանում, քանի որ այս դասարանում սովորողների մեծ մասի մոտ բանավոր խոսքն ավելի լավ է զարգացած:Այդ իսկ պատճառով ես որոշեցի այդ աշակերտների հետ իրականացնել դերային խաղով երկխոսություններ, որոնք էլ ավելի կխթանեին նրանց բանավոր խոսքի զարգացմանը:

Այս դասարանում սովորում են 16 աշակերտ՝ 10 աղջիկ և 6 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հաղորդակցական ունակություններ: Անգլերեն անցնում են շաբաթական 2 ժամ և դասացուցակում այն տեղադրված է 3-րդ կամ 4-րդ ժամերին: Ես շատ լավ գիտեմ յուրաքանչյուր աշակերտի բանավոր հաղորդակցման հմտություններն ու կարողություններն անգլերենից: Այս դասարանի հիմնական խնդիրն է աշակերտների մեծ մասի ներգրավվվածությունը բանավոր հաղորդակցման մեջ, ինչը պատճառ դարձավ,որ ես իմ հետազոտական աշխատանքն իրականացնեմ հենց այս դասարանի աշակերտների հետ՝ երկխոսությունների և մենախոսությունների և լսողական վարժությունների միջոցով, իսկ այն աշակերտների, ովքեր ունեն բանավոր խոսքի զարգացվածության ավելի ցածր մակարդակ, նրանց համար կազմակերպել եմ պոքրի մենա[ոսություններ և լսողական վարժություններ:

3.2.Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը վերաբերում էր <<TV or not TV>>-ին: Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրեցին իրենց տնային աշխատանքները ՝ որտեղ նրանք կազմել էին նախադասություններ՝գործածելով իրենց նոր բառապաշարը : Քննարկվեց տնային աշխատանքի սխալները , տրվեց բանավոր հետադարձ կապ:

Հարցադրումներով սկսվեց դասը: Ամփոփեցինք <<Media>> թեման, որպեսզի ստուգվեին աշակերտների ձեռք բերած գիտելիքներն անցած թեմայի վերաբերյալ: Այնուհետև աշակերտներից մեկը գրատախտակի մոտից ընթերցեց իր իսկ կազմած նախադասությունները և մյուս աշակերտները պետք է հիշեին և ասեին այն բառերը, որոնք վերաբերվում էին հեռուստատեսությանը: Աշակերտները պատասխանեցին առաջադրված հարցադրումներին հեռուստատեսության վերաբերյալ՝ իմ ուղղորդող հարցերի օգնությամբ: Գրատախտակը բաժանեցինք եռկու մասի՝գրելով հեռուստատեսության լավ և վատ կողմերը և մի քանի աշակերտներ սկսեցին աշխատել գրատախտակի մոտ՝ լրացնելով համապատասխան բառերը: Մնացած աշակերտները աշխատում էին իրենց տետրերում:

Այնուհետև դասարանը բաժանվեց երկու խմբի և կատարեցինք խմբային աշխատանք: Գրատախտակին կախեցինք մի նկար, որը բաժանված էր չորս մասի և որոնք ներկայացնում էին հեռուստածրագրերի տեսակները, այնուհետև տրվեց նաև լրացուցիչ բառապաշար և խմբերը պետք է նկարների վերաբերյալ երկխոսություններ կազմեին: Խմբային աշխատանքի ավարտից հետո խմբի անդամներից երկուսը երկխոսության միջոցով պատմեցին մի նկարը, երկրորդ նկարը հաջորդ երկու աշակերտը պատմեցին և այդպես շարունակ: Երկու խմբերի երկխոսությունները ներկայացնելուց հետո աշակերտները պատասխանեցին իմ կողմից տրված հարցադրումներին: Թեման ամփոփելուց և բանավոր վերլուծելուց հետո հանձնարարվեց նոր թեման՝աշակերտները պետք է որևէ հեռուստածրագիր գրեին ՝օգտագործելով իրենց սովորած ողջ բառապաշարը, այնուհետր որպես հեռուստահաղորդավար ներկայացնեին այն՝մենախոսության ձևով:

Աշխատանքների իրականացման ժամանակ բոլոր աշակերտներին տրվեցին ուղղորդումներ, նաև բանավոր հետադարձ կապ: Իմ ուշադրության կենտրոնում մնացել էին հիմնականում ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները, քանի որ նրանք հետ են մնում ուսումնական ծրագրերից:

Դասն ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով. 1 վարժություն ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների համար և մեկ վարժություն միջին և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների համար:

3.3.Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման էր <<**The Net Generation>>(**տե՛ս դասպլան-2): Թեման բավականին հետաքրքիր էր և արդիական, այդ իսկ պատճառով թեման ամբողջովին հաղորդվեց աշակերտների մասնակցությամբ: Նոր դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, այսինքն նրանք ներկայացրեցին իրենց իսկ պատրաստած հեռուստածրագրերը և որպես հեռուստահաղորդավար ներկայացրեցին դրանք: Որոշ աշակերտների չէր հաջողվել կազմել ծրագիրը, ուստի նրանք էլ հարցեր էին պատրաստել: Աշակերտները բավականին ոգևորված էին և ողջ դասարանը ակտիվ մասնակցում էր:

Աշակերտների համար նախապես պատրաստված հարցերը գրեցի գրատախտակին և նրանց ժամանակ տրվեց հարցերին պատասխանելու համար:

Այնուհետև բարձր առաջադիմություն ունեցող մի աշակերտ ընթերցեց մի հոդված << New Generation >>-ի վերաբերյալ, այնուհետև աշակերտներին ժամանակ տրվեց պատրաստվելու և իրենց բառերով այն վերարտադրելու համար: Յուրաքանչյուրը յուրովի ներկայացրեց , ոմանք բավականին սխալներով, մի քանի աշակերտներ էլ նույիսկ չկարողացան պատմել, ուստի նրանք էլ պատասխանեցին տեքստի վերաբերյալ հարցերին: Այսպիսով ողջ դասարանը ներգրավված էր դասի մեջ:

Այնուհետև բաժանվեցին երկու խմբի և յուրաքանչյուր խումբը նկարեց մի նկար, որը կնկարագրեր նոր սերնդին և հետո մեկը մյուսին լրացնելով պատմեցին նկարը:

Թեման ամփոփելու համար յուրաքանչյուր աշակերտ բանավոր նոր սերնդին նկարագրող 1 նախադասություն կազմեց, սակայն նրանք պետք է լսեին միմյանց, այնպես որ յուրաքանչյուրի կազմած նախադասությունը մտքով կապված լիներ մյուսի հետ:

4. Վերլուծություն

Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար՝ անցկացվեց 2 բանվոր հաղորդակցման դասեր, որոնց ժամանակ դասարանի գրեթե մեծ մասը մասնակցեց դասերին, իսկ թույլ աշակերտների հետ օգտագործվեց բանավոր հաղորդակցման երկխոսությունների մեթոդը: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում միջին և ցածր առաջադիմության առաջադիմություն ունեցող աշակերտներին, որն էլ պատճառ հանդիսացավ նրանց ներգրավվածությանը դասապրոցեսին, ինչպես նաև նրանց հնարավորություն տրվեց ձեռք բերել ինքնուրույն աշխատելու հմտություն (ցածր կարողության տեր

աշակերտներին նաև աշխատանք բառարանի հետ): Աշակերտները խոստովանեցին, որ բանավոր տրամադրված հետադարձ կապը ավելի արդյունավետ է:

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ բանավոր հաղորդակցման ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1.հետաքրքիր թեմայի ընտրություն

2.հարցադրումների կիրառում դասաժամերին, որոնք խթանում են աշակերտների հաղորդակցմանը

3. բանավոր հետադարձ կապի տրամադրում

4.երկխոսությունների կիրառում , որոնք կօգտագործվեն դերային խաղերի միջոցով

5.թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ հարցադրումների, մտագրոհների, անհատական պրեզենտացիաների միջոցով;

Այսպիսով ուրացված բառապաշարի, քերականական կանոնների միջոցով սովորվողը պետք է կարողանա ինքնուրույն և տրամաբանորեն խոսել, դատողություններ անել, հիմնավորել ասածը:

6. Բանավոր հաղորդակցման ուսուցումը բաժանել երկու բաղադրիչների՝ ունկնդրել և խոսել: Դասի վերջնական նպատակը պետք է լինի աշակերտների ազատ հաղորդակցման հմտությունների ձևավորումը:

Գրականության ցանկ

Penny Ur, “A course in English language Teaching”, Cambridge University Press 1991, p. 120-124

2. Рогова Верещагина,” МЕТОДИКА ОБУЧЕНИЯ ИНОСТРАННЫМ ЯЗЫКАМ”, ср 135-140
3. Brown and Yule, “Discourse Analysis”, Cambridge University Press, 2010, p. 3
4. **Зарецкий В. К. ,,Проблемы дифференцированнога обучения и возможности интегразии,, ИПИ, Москва**
5. **Danny R. Orraj ‘” Oral Presentations Lesson Plan, August 29, 2011”**

ԴԱՍԱՊԼԱՆ-1

Ուսուցիչ՝ ՏԱԹևԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Առարկա՝	Անգլերեն	Ամսաթիվ	10.04.2022	Կիսամյակ	2-րդ	Դասարան	11

Թեմա՝	TV or not TV
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, բառարան,նկարներ
Դասի նպատակը՝	• Ընկալել տեքստի բովանդակությունը և պատասխանել հարցերին • Ընկալել հեռուստատեսության վերաբերվող բառապաշարը և ամրապնդել հարցադրումների միջոցով • Զարգացնել հաղորդակցական հմտություններ հարցերի, երկխոսությունների միջոցով • Խմբային աշխատանքի միջոցով խթանել և զարգացնել աշակերտների հաղորդակցական ունակությունները
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Կազմել նաղադասություններ՝ օգտագործելով մեդիա բառապաշար Ուղղորդող հարցերի օգնությամբ պատասխանել համապատասխան հարցադրումներին մեդիայի վերաբերյալ Պատմել նկարը, վերլուծել, կատարել խմբային աշխատանք և ներկայացնել երկխոսությունների միջոցով Դիտել ֆիլմից հատված և վերլուծել այն

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)
5րոպե-սկիզբ	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները,		

10րոպե-ընթացք 15րոպե	Ներկայացնել տնային աշխատանքները Պատասխանել հարցերին Փոխադարձ հարցեր տալ, ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին կտրվեն համեմատաբար հեշտ հարցեր Կամփոփվի նախորդ թեման և հարցադրումներով անցում կկատարվի հաջորդին Գրատախտակի մոտից բարձր առաջադիմություն ունեցող մեկ աշակերտ կընթերցի տեքստը, իսկ մյուսները կհիշեն մեդիայի մասին բառերը ր նշումներ կանեն Աշակերտները կպատասխանեն առաջադրված հարցադրումների ն հեռուստատեսութ	բացատրել անհասկանալի մասերը Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցադրումներ Գրատախտակը բաժանել երկու մասի, գրել հեռուստատեսության լավ և վատ կողմերը Հետևել կատարվող աշխատանքներին, կատարել շտկումներ Կախել նկարներ՝ որտեղ աշակերտները պետք է նկարագրեն նկարները նախապես ուսումնասիրած բառապաշարով Հետևել կատարվող աշխատանքներին, տրամադրել անհրաժեշտության	*1.*Որքան կարևոր է հեռուստատեսությունը ձեզ համար Աշաբաթը քանի ժամ եք անցկացնում հեռուստացույցի առջև անցկացնում*:* *2.*Երբ եք հեռուստացույց դիտում *3.*Որոնք են հեռուստատեսության լավ և վատ կողմերը *4.*Ի՞նչ արտահայտություններ գիտեք հեռուստատեսության հետ կապված *5.*Որն է ձեր սիրելի հեռուստածրագիրը և ինչու*;*	Հարցադրումների մեթոդ Մտագրոհ

12рոպե 3рոպե-ավարտ	յան վերաբերյալ՝ իմ ուղղորդող հարցերի օգնությամբ: Գրատախտակը բաժանում ենք երկու մասի գրելով հեռուստատեսության լավ և վատ կողմերը և մի քանի աշակերտներ սկսեցին աշխատել գրատախտակի մոտ՝ լրացնելով համապատասխան բառերը: Մնացած աշակերտները աշխատում էին իրենց տետրերում: Կատարում են խմբային աշխատանք՝ նկարագրելով հեռուստատեսության վերաբերյալ նկարները Լուռ լսել դասը , կատարել	դեպքում առաջ մղող անհատական բանվոր, հետադարձ կապ: Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում		Կարճ դասախոսություն՝ստեղծելով միջառարկայական կապ(հայոց լեզու)

	նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր, աշխատանք դասագրքի հետ			
Տնային աշխատանք	Էջ *101.* վարժ. *7* և *8* Կազմել որևէ հեռուստածրագիր			

Ուսուցիչ՝ Տ. Վարդանյան

Առարկա՝	անգլերեն	Ամսաթիվ	14.04.2022	Կիսամյակ	2	Դասարան	11
Թեմա՝	The Net Generation						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, բառարան, համակարգիչ						
Դասի նպատակը՝	Բանավոր հաղորդակցման ունակությունների զարգացում Տեքստի ըմբռնում և վերլուծում Սեփական մտքերի արտահայտում Տրված թեմայի վերաբերյալ կարծիքի հայտնում						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Պատասխանել տեքստի վերաբերյալ հարցերին Վերարտադրել ընթերցված հոդվածն իրենց իսկ բառապաշարով Պատմել իրենց իսկ նկարած նկարը Համեմատել Մ սեռունդը նախորդ սերունդների հետ						

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ(ներ)
5րոպե-սկիզբ 10րոպե-ընթացք 15րոպե	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները՝ի ոնց կազմած այն հեռուստածրագրերը, որոնք հանձնարարվել էր նախորդ դասին Պատասխանել հարցերին Փոխադարձ հարցեր տալ: Ուղղորդող հարցերի միջոցով ներգրավվել դասապրոցեսի մեջ	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցադրումներ Գրատախտակը բաժանել 4 մասի, գրել տարբեր նախադասություններ,՝որոնք կնկարագրեն նոր սերնդին; Հետևել կատարվող աշխատանքներին, կատարել շտկումներ	*1.*Ինչ է *M* սերունդը*:* *2.*Ինչ այլ սերունդներ գիտեք*: 3.*Ինչ ընդհանուր առանձնահատկություններ եք տեսնում ձեր և նախորդ սերունդների միջև*:* *4.*Ինչ առավելություններ և թերություններ եք տեսնում այդ երկու սերունդների միջև*:*	Հարցադրումների մեթոդ

12рոպե 3рոպե-ավարտ	Լուռ լսել դասը , կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր, վերարտադրել տեքստը Բաժանվել երկու խմբերի և նկարե մի նկար, որը կնկարագրի նոր սերնդին և հետո մեկը մյուսին լրացնելով պատմել նկարը:	Հետևել կատարվող աշխատանքներին, տրամադրել անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանվոր հետադարձ կապ: Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում	Յուրաքանչյուր աշակերտ բանավոր նոր սերնդին նկարագրող *1* նախադասություն կկազմի,	Տարբերակված ուսուցում Խմբային աշխատանք Կարճ դասախոսություն՝ ստեղծելով միջառարկայական կապ(հայոց լեզու)

	Հնչեցնել անհասկանալի հարցեր, գրել անծանոթ բառերը			
Տնային աշխատանք	Էջ *75* վարժ. *7* և *8*			